

ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԴՊՈՆԵՍԱՆ, ԿԵՍՍՐԱՅԻ (եգիպտաբնակ). — Փոքր հասակէն եղբօրը Գրիգորի հետ Աղեքսանդրիա գալով՝ կ'ըբաղի ծխախոտի վաճառականութեամբ եւ կը հիմնէ Մեղզոնեան ծխախոտի ֆապրիկը և կը տիրանայ կարևոր հարստութեան մը: Կարապետ՝ իր բարեյիշատակ եղբօրը մահուանէն յետոյ՝ Մեղզոնեան սառն հարստութիւնը՝ մերձաւորագէտ կէս միլիոն եգիպտոսկի՝ Բարեգործական Ընդհ. Միութեան խնամարկութեան տակ զնելով՝ ամբողջութեամբ ազգին կը նուիրէ, յօգուտ որբոց եւ աղքատ ուսանողներու կրթութեան եւ դաստիարակութեան: Այդ հոյակապ նուիրատուութեան առթիւ, Բարերարը կ'որոշէ որ Ս. Յակոբի Ժառ. վարժ.ի ինպաստ տարուէ տարի 1000 եգոսկի վճարուի անխափան, ինչ որ կը կատարուի 1926 էն սկսեալ:

Տն. Ժողովը երախտագիտութեամբ ընդունեց այս նուիրատուութիւնը և Ս. Պատրիարքի Օրհնութեան Կոնդակովն յայտնեց Բարերարին՝ Միաբանութեան շնորհակալութիւնը: Սոյն նուիրատուութեամբ Ժառ. վարժ.ի 15 սաները կը կոչուին Մեղզոնեան սաներ և կը պատրաստուին եկեղեցականութեան: Ս. Պատրիարքը Ս. Սաշի տօնին՝ կը պատարագէ Ս. Յակոբի տաճարին մէջ, եւ հանդիսաւոր հոգեհանգիստ կը կատարուի նոյն օրը՝ Մելզոնեան գերդաստանի ննջեցելոց համար:

ԿԱՐԱՊԵՏ ՄՈՒՐԱՏԵԱՆ, ԿԱՐՆԵՑԻ. — 1871 ին կը հոգայ տպագրութեան ծախքը Մելքիսեդեկ վրդ. Մուրատեանցի Պատմ. նոր Կսսիարանի գիրքին «ի յիշատակ հոգւոյ իւրոյ և յօգուտ Ժառ. վարժ.ի Ս. Յակոբեանց»:

Մ

ՄԱՏԹԷՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ՀՆԴԿԱՀԱՅ. — Վաճառակաւորութեամբ կ'ըբաղէր Չինաստանի Մազաօ (Macao) քաղքին մէջ (Փորթուգալիան գաղութ), և կը տիրանայ մեծ հարստութեան: Կտակով մը իր ամբողջ հարստութեան երեք մասը կը թողու իր կնոջ և որդւոյն. իսկ մնացեալը կը յատկացնէ երեք վանքերու. որոնց մին էր Ս. Յակոբի վանքը. կտակադրամը ի պահ կը զնէ Հնդկաց Լուսիտանիոյ (Փորթուգալեան) ընկերութեան գրամատունը և փոխանորդ կը կարգէ Լուսիտանացւոց եպս.ը, Մազաօ իշխան Մանուէլ Վէնսէնթը եւ չորս հայեր: 1798 ին